

Ա. Մ. ԿՈԹՈՂՅԱՆ

Գյուղաճենական գիտությունների բեկնածու

ՄԱՅՐԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ՄԱՅՐԱՀԱՆՄԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ  
ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ  
ՄԵԶ

КНИГА ДОЛЖНА БЫТЬ  
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗДНЕ  
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

638.12

12298

4-63

Чорнович, К.И.

Синтаксис русской языка  
бывшего наречия

638.12

Ա. Մ. ԿՈԹՈՂՅԱՆ

Կ-63

Գյուղատնտեսական գիտությունների բնկածու

ԱՅՈՒԴԱՆ Հ 1961

# ՄԱՅՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ՄԱՅՐԱՀԱՆՄԱՆ ԱՐՁԵԱՏԱԿԱՆ

ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՄԵՂՎԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ

ՄԵԶ

19293



А. М. КОТОГЯН  
Маткавдства и искусственный ввод  
пчеломоток  
(на армянском языке)  
Армгиз Ереван, 1947 г.

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՄԱՅՐԱՀԱՆՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
• ԵՎ ՍԵԼԵԿՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ


Մեղվաբուծության մեջ մեղուների բարելավման գործը և սելեկցիոն աշխատանքները կապված են արհեստական մայրահանման և նրանց մի չարք առանձնահատկությունների հետ, որոնք ունեն ոչ միայն պրակտիկ նշանակություն, այլև գիտական մեծ հետաքրքրություն:

Այն առանձնահատկությունները, որոնցով օժտված են մեղուները, չնորհիվ իրենց Փիզիոլոգիական հատկության, այդպիսիք չունեն մարդկանց կողմից ընտելացած մյուս անասունները՝ ոչխարները, խոզերը և այլն:

1. Պոլիմորֆիզմ՝ (բազմաձևություն) .— Մեղվի ընտանիքը բաղկացած է երեք ձևի անհատներից, որոնք տարբերվում են մեկը մյուսից իրենց կազմությամբ, մեծությամբ, գույնով, կատարած աշխատանքներով և մի չարք այլ նշաններով:

Նորմալ ընտանիքն ունի մեկ մայր, որը դնում է ձվեր, հարյուրավոր բուեր, որոնք գոյանում են մոր չեղմնավորված ձվերից և տասնյակ հազարավոր աշխատավոր մեղուներ, որոնք իրենցից ներկայացնում են թերազարդացած էգեր, ունեն մեռական օրգանների ուրդիմենտային (անուճիկ) մնացորդներ և գոյանում են մոր բեղմնավորված ձվերից:

Աշխատավոր մեղուները, բուերը և մայրն ապրում են մեկ ընտանիքում որպես մի բիոլոգիական միավոր: Այս երեսությը բիոլոգիայի մեջ կոչվում է բազմաձևություն (պոլիմորֆիզմ): (Տես № 1 նկարը):



Դիար Հ 1  
Մայր Աշխատավոր մեղու Բռն.

Մայր մեղմի դրած բեղմնավորված ձվերից դուրս են գալիս կամ մայրեր, կամ աշխատավոր մեղուներ. դա կախված է կերի որակից, քանակից և բժիջի ձևից:  
Պոլիմորֆիզմի շնորհիվ սելեկցիոն աշխատանքներում մենք հնարավորություն ունենք ստուգելու մորություն, տասնյակ հազարավոր աշխատավոր մեղուների աճը, որը հնարավոր չէ անտառապահության մյուս ճյուղերում:

2. Մայր մեղմի բարձր բեղունակությունը.—Եթե կովը տարեկան տալիս է մեկ հորթ, ոչխարը՝ մեկ կամ երկու գառ, հավք՝ մոտ 200 ձու, շերամի թիթեռն իր ամբողջ կյանքում՝ 500, ձու, ապա մայր մեղուն մեկ սեղոնի ընթացքում տալիս է 150 հազարից ավելի ձու, իսկ 24 ժամում, սեղոնի որոշ շրջանում, ձվում է 1200—2000 ավելի ձու:

Մայր մեղմի բարձր բեղունակությունը հնարավորությունն է տալիս մեղ, սելեկցիոն աշխատանքների համար, կարծ ժամանակամիջոցում արհեստական մայրահանման ու բոռահանման միջոցով ստանալ մեծ քանակությամբ մայրեր ու բոռեր:

Մի ամսվա ընթացքում մայրահանման միջոցով մենք կարող ենք մի արտադրողից (մորից) ստանալ մի քանի հազար մայր մեղու, մինչդեռ նման համելություններ չունեն ընտանի կենդանիներից և ոչ մեկը:

3. Մայր մեղմի, բռների և աշխատավոր մեղուների Փիզիոլոգիական աճը.— Սելեկցիոն աշխատանքների համար խոչոր նշանակություն ունի մայր մեղմի Փիզիոլոգիական արագ աճը, որը մոր բեղունակության հետ միասին, կարծ ժամանակում տալիս է մեզ մեծ քանակությամբ մեղմացին մասսա և մի քանի սերունդներ՝ մի սեղմնի ընթացքում:

Հաշված ձու դնելու օրից՝ մայր մեղուն ծնվում է 16 օրում, աշխատավոր մեղուն՝ 21 օրում և բոռ մեղուն՝ 24 օրում:


Մայր մեղուները սեռականապես հասունանում են, ինչպես մեր փորձը ցույց տվեց, ընդհանրապես, 5—11 օրում, իսկ բռները՝ 10—16 օրում:

Մայր մեղուն բռնի հետ զուգավորվելուց 3—5 օր հետո սկսում է իր նորմալ ձվարկությունը, իսկ բռնը զուգավորվելուց հետո մեղուն է: Զվից մայրացուն ծնվում և զարգանում է 16 օրից, սեռական հասունացման է հասնում 5—11 օր հետո և սկսում է ձվել զուգավորվելուց 3—5 օր հետո: Այսպիսով մոր հասունացման մաքսիմալ տևողությունը հավասար է  $16 + 11 + 5 = 32$  օրվա, իսկ բռների հասունացման տևողությունը՝  $24 + 16 = 40$  օրվա:

4. Զուգավորման պրոբլեմը մեղմաբուծության մեջ:— Զուգավորման պրոբլեմը մեղմաբուծության մեջ ունի խոչոր նշանակություն, որովհետև մայրն, ինչպես վերենում ասացինք, զուգավորման ցանկությունը է հայտնում 5—11 օրական հասակում և այդ ցանկությունը շատ կարծ է տեսում: 1933թ. մեր փորձը ցույց տը վեց ընդամենը 11—28 օր, — բայց պատահեցին եղակի մայրեր, որոնց ցանկությունը տեսում էր մի քիչ ավելի: Այդ կարծ ժամանակամիջոցից հետո մայրերը բոլորովին կը օրցնում են իրենց զուգավորման ցանկությունը:

Մայրն իր ամբողջ կյանքում միայն մեկ անգամ է զուգավորվում բռնի հետ: Զուգավորվելուց հետ

սալերման հավաքվում է սերմընդունաբանում, որտեղ  
մնում է 2—3 և ավելի տարիներ և աստիճանաբար գոր  
ծածկում: (Տես № 2 նկարը):



Նկ. 2.

- Ա. Մայր մեղվի ձվարանը.  
Բ. Բռուանու մեղվի ձվարանը.  
Ըշխատավոր մեղվի ձվարանը.  
1. Զվաքեր խողովակներ  
2. Սերմնաընդունաբանը.  
3. Հեշտոցը:

Մեկ սեռական գործողության արդյունքը՝ որակա-  
պես հավասար բաժանվում է 300—400 հազար ձվի կամ  
30—40 կգ. մեղվի վրա: Այս կարևոր առանձնահատկու-  
թյունից պիտի եզրակացնել, թե զուգավորման ակտն  
ինչ խոշոր նշանակություն ունի մեղվարուծության  
մեջ:

Մելեկցիոն աշխատանքների համար լավ տռհմական  
մայրեր ընտրելուց հետո, որքան կարելի է հնարավո-

ըություն պիտի ստեղծել, որպեսզի մայրերը զուգավորվեն տոհմական բոռերի հետ, որովհետև մեղվաբուծությունը անասնապահության մյուս ճյուղերի նման չէ: Օրինակ՝ եթե կովը ցանկություն է հայտնում զուգավորվելու և մենք նրան այս կամ այն պատճառով հնարավորություն չունենք ծածկել տալու, 24—36 ժամ հետո նրա ցանկությունն անցնում է, բայց նորից հայտնվում է 28 օր հետո, իսկ մեղուների մոտ այդ բացակայում է:

Զգուգավորված մայրեր ստանալուն պես պետք է հնարավորություն ստեղծել, որ զուգավորումը որքան կարելի է շուտ կատարվի, որպեսզի նրա ցանկության կարճ ժամանակամիջոցը չանցնի և մայրն իր զուգավորման ցանկությունը չկորցնի:

Մայր մեղվե սեռական ցանկությունը տեսում է 11—28 օր. այդպիսին կորցնելուց հետո նա բոլորովին անպետքանում է, և մենք ստիպված ենք լինում ոչընչացնել այդ թանգարժեք մորը:


5. Պարտենոգենեզիս (կուսածնություն) — Պարտենոգենեզիսը մեղվաբուծության սելեկցիոն աշխատանք ների համար հսկայական նշանակություն ունի:

Մեղուների կուսածնությունը, բացի գիտական նշանակություն ունենալուց, ունի նաև գործնական նշանակություն: Ինչպես բուսաբուծության մեջ ինքնափոշուման, այնաևս էլ մեղվաբուծության մեջ կուսածնության միջոցով կարելի է ստանալ սերնդի մաքուր գիծը, այն՝ ինչ որ դժվար է ստանալ անասնապահության մյուս ճյուղերում:

Պարտենոգենեզիսը, դա մեղուների այն հատկությունն է, երբ մայր-մեղվի չքեզմնավորված ձվերից ածում, զարգանում և լրիվ հասունացման հասնելով բուռեր են դուրս գալիս: Մայր մեղուն կարող է բոլորովին չզուգավորվել բոռի հետ և դնել չքեզմնավորված ձվեր, որոնցից դուրս կդան բացառապես բոռեր: Նույնը կարող է տեղի ունենալ նաև աշխատավոր մեղուների մոտ, որովհետեւ վերջիններս, որպես էդ մեղուներ, ունեն սե-

ուական օրդանների ռուտեմենտային մնացորդներ և թեր զարգացած ձվարան, որի հետեանքով նրանք չեն կարող զուգավորվել բոռերի հետ։ (Տես նկ. № 2-Բ)։

Մայր մեղվի բացակայության դեպքում աշխատավոր երիտասարդ մեղուների մի մասի մեջ, որոնց կաթնագեղձերը գործում են և նրանք իրենց բերանի խոռոչում եղած կաթնահյութը կուլ են տալիս, որովհետև ընտանիքում ոչ մայր կա, ոչ էլ որդ ու ձու, որպեսզի



Նկ. 3.

Մայրահանման Ալեյի եղանակը

նրանց կերակրեն, ուստի նրանց ձվարանը սկսում է զարգանալ, կազմակերպվել և արտադրել ձվաթիջներ։ Աշխատավոր մեղուն սկսում է դնել չբեղմնավորված ձվեր, որոնցից դուրս կդան նույնպես բացառապես բուռեր։

Այսպիսով պարզվում է, որ բոռը չունի հայր և նա առաջին սերնդում իր ժառանգական հատկություններն ստանում է միմիայն մորից։ Բոռը հայր չունենալով հանդերձ, կարող է ունենալ պապ։ Օրինակ համար

Եթե վերցնենք դեղին, չբեղմնավլորված մայրը, և զուգավորենք մեր տեղական գորշ բոռով, այդ մոք ձվերից կստանանք երկու արտադրողի հատկություններ ունեցող խառնուրդ մեղուներ և մայրեր, իսկ բոռերը կինեն զտարյուն, դեղին և օժտված մոր ժառանգական բողոք հատկություններով:

Եթե նորից այդ ստացած խառնուրդ (մետիս) չբեղմնավորված մորը ծածկենք մեր տեղական գորշ բոռով, կստանանք երկու տեսքի մեղուներ և գորշ տեղական բոռեր: Մեղուների և մայրերի մի մասը կլինի մաքուր գորշ գույնի, իսկ մի մասը՝ դեղին և տեղականի խառնուրդ: Բոռերի որոշ մասը միայն կարող են լինել մետիսներ, որոնք կունենան մոր և պապի ժառանգական հատկությունները:

6. Մայր մեղվի դերը մեղվի ընտանիքում.— Մեղվի ընտանիքն իր ներքին հատկություններով տարբերվում է կենդանական տեսակի բոլոր ընտանիքներից: Երբ ընտանիքի մայրը փոխում ենք մի ուրիշով, ընտանիքը մի քանի ամսվա ընթացքում ժառանգական տեսակետից որպակապես փոխվում է:

«Տվեք ինձ լավ մայր, և ես ձեզ կտամ առատ մեղբարերք», ասում է ամերիկյան հայտնի մեղվաբույծ գիտնական Դուլետը:

Այս առնչությամբ սելեկցիոն աշխատանքների ընթացքում պետք է մեր գլխարկոր ուշադրությունը դարձնենք մայրերի ընտրության վրա, որովհետեւ մայր մեղուները խոչոր չափով տարբերվում են կենդանական մյուս տեսակի էգերից թե իրենց ֆիզիոլոգիական ֆունկցիաներով և թե կատարած աշխատանքով:

Անսանապահության մեջ մենք պահում ենք ցեղական ցուլեր, հովատակներ, որովհետեւ ցեղերի բարելավման համար նրանցից կարող ենք ավելի շատ սերունդներ ստանալ, իսկ մեղվաբուծության մեջ արուները չունեն այդ նշանակությունը, որովհետեւ նրանք հենց սեռական առաջին ակտից հետո մեռնում են:

Մեղվաբուծության մեջ տոհմերի բարելավման

գործում այդ կարևոր դերը մայր մեղմի վրա է ընկ-  
նում:

7. Ինչ դեր է խաղում մեղմի ընտանիքը.— Այն ո-  
րակը, որ հետաքրքրում է մեզ, ամբողջ ընտանիքի՝  
մոր, բոռերի և աշխատավոր մեղուների հատկություն  
ների հանրագումարն է և ոչ թե անհատ մեղմի, որով-  
հետև մեղուն, առանձին վերցրած, չունի իր ինքնու-  
րույն ապրելակերպը: Մենք մեր աշխատանքների ըն-  
թացքում միշտ գործ ունենք ամբողջ ընտանիքի հետ:

Եթե մենք ուզում ենք բարելավիել մեր մեղուները  
և ստանալ մեր ցանկացած հատկություններով միատե-  
սակ սերունդ, ապա պետք է միայն լավ ընտրություն  
կատարենք՝ զոկենք ցեղերից, պապուլացիաներից այն-  
պիսի արտադրողներին ու բուժման միջոցով այդ հատ-  
կություններն ամրացնենք նրանց մեջ:

Եթե մենք մեր մեղմանոցներից որևէ մեկում նկա-  
տենք բարձր արտադրողականություն ունեցող ընտա-  
նիք և ցանկանանք այդ հատկանիշներն ամրացնել  
նրա սերունդի մեջ, այդ կարող ենք կատարել այն ժամա-  
նակ, երբ այդ բարձր արտադրողականության հատկա-  
նիշը սերունդը ժառանգում է:

Ուրեմն, մեղուների բարելավման համար գոյու-  
թյուն ունի մի ճիշտ մեթոդ, ուա ընտրության մեթոդն  
է: Մեղուներից բարձր արտադրողականություն ունե-  
ցող սերունդ ստանալու համար, պետք է կատարել հե-  
տևյալ աշխատանքները.

1. Ընտրել նախնական մատերիալը, որպես տոհմա-  
կան ընտանիք:

2. Ուսումնասիրել այդ տոհմական արտադրողների  
ծագումը, մայրը, պապուլացիան և այլն:

3. Գտնել տոհմական արտադրողի տնտեսապես  
օգտակար հատկությունները և առավելությունները՝  
միջին արտադրողականություն ունեցող ընտանիքների  
համեմատությամբ:

4. Ուսումնասիրել նրա գույնը, մեծությունը, կըն-  
ծիթի երկարությունը և այլն:

5. Նրա վաղահասությունը:  
 6. Նրա հատկությունների լրիվ փոխանցումը սերընդին:  
 7. Ստուգել այդ արտադրողներից ստացած սերունդները:

8. Այդ արտադրողների մասսայականորեն բազմացումը և մեղուներ բարելավվելը:

8. Մասսայական ընտրությունն.— Եթե ուշի ուշով հետեւելու լինենք ամեն մի մեղվանոցի, միշտ էլ կպատահանք այնպիսի ընտանիքների, որոնք աչքի են ընկնում իրենց այս կամ այն հատկություններով և բարձր արտադրողականությամբ՝ համեմատած մեղվանոցում գտնվող միջին արտադրողականություն ունեցող այլ ընտանիքների հետ:

9. Ռեկորդիսաների հայտաբերումը.— Ընտրության ընթացքում մեզ՝ մեղվաբույծներիս առհասարակ հետաքրքրում է ընտանիքների տնտեսապես օգտակար հատկանիշները։ Որպեսզի կարողանանք այդ ռեկորդիսաներին հայտաբերել և դրանց ճիշտ գնահատականը տալ, անհրաժեշտ է ամեն մի մեղվանոցում ունենալ գրանցման մատյան, որտեղ գրի առնվիեն ընտանիքների հատկությունների մասին մանրամասն տեղեկություններ հետեւյալ ձեռվ.

#### Ընտանիքի գրանցման թերթիկ

| Հ. Տ. Տ.                             |                                      | Բերքի բնորհանուք<br>քանակը |                   |
|--------------------------------------|--------------------------------------|----------------------------|-------------------|
| Ազգանիքի անունը                      | Ազգանիքի ազգական անունը              | Ապր.                       | Մնացել է ընտանիքի |
| Աննա Թիգրանի                         | Աննա Թիգրանի                         | Կամ բարձր բարձր            | Կամ բարձր բարձր   |
| Քանի Հրանտի                          | Քանի Հրանտի                          | Վաղ որդի                   | Վաղ որդի          |
| Պուղ մեղուն պատում                   | Պուղ մեղուն պատում                   | Հասանակ                    | Հասանակ           |
| Պողոսի բանակիլ 2՛ր ջան               | Պողոսի բանակիլ 2՛ր ջան               |                            |                   |
| Մայր մեղյան հասակը                   | Մայր մեղյան հասակը                   |                            |                   |
| Հիկանդրություններ                    | Հիկանդրություններ                    |                            |                   |
| Կիր քված կամ բաց որդի                | Կիր քված կամ բաց որդի                |                            |                   |
| ստացել է ո՞՛ղ ընտանիքից              | ստացել է ո՞՛ղ ընտանիքից              |                            |                   |
| Կիր քված կամ բաց որդի                | Կիր քված կամ բաց որդի                |                            |                   |
| դադը հանգել է ո՞՛ղ                   | դադը հանգել է ո՞՛ղ                   |                            |                   |
| Ընտանի. արդիւր                       | Ընտանի. արդիւր                       |                            |                   |
| Մը հետաքանի կամ բնական հանգել է ո՞՛ղ | Մը հետաքանի կամ բնական հանգել է ո՞՛ղ |                            |                   |
| Տը կամ է մուսաթիւր                   | Տը կամ է մուսաթիւր                   |                            |                   |

Այս գրանցման թերթիկը պետք է լրացնենք ամեն անգամ, երբ ընտանիքի հետ կատարում ենք որոշ գործողություն: Գրանցման թերթիկն անհրաժեշտ է, որպեսզի ռեկորդիստները հայտաբերելուց մանրամասն ծանոթանանք նրանց պատմության հետ:

Եթե մի ընտանիքում նկատենք մեզ շահագրգռող հատկություններից մեկն ու մեկը, անմիջապես ստուգում ենք վերոհիշյալ գրանցման թերթիկը, եթե այդ ընտանիքին կնքված կամ բաց որդենք տվել մի ուրիշ ընտանիքից: Այդ դեպքում մենք ճիշտ եզրակացություն չենք կարող հանել այդ ընտանիքի մասին, որովհետև մենք գիտենք, որ ընտանիքի արտարողականությունը կամ օգտակար հատկություններն արտացոլող հայելին աշխատավոր մեղուներն են, իսկ մենք այդ ընտանիքին ուրիշ ընտանիքից տվել ենք բաց կամ կնքված որդեր, որոնցից դուրս են եկել աշխատավոր մեղուներ:

Ընտանիքների ստուգումը կատարում ենք ամենասուշը 8 օրը մեկ անգամ, որովհետև հաճախ պատահում են այնպիսի ընտանիքներ, որոնք իրենց հին մայրը փոխում են այն ժամանակ, երբ նոր մայրն արդեն ընտանիքում սկսում է ձու գնել: Եթե ժամանակին չնկատենք, այդ դեպքում նույնպես սխալ կլինի մեր հանած եզրակացությունն այդպիսի ընտանիքների վերաբերյալ:

Ընտրություն կարելի է կատարել երկու ուղղությունը.

1. մասսայական և

2. անհատական ընտրություն:

10. Մասսայական ընտրություն.— Ռեկորդային այն ընտրություններից, որոնք ունեն բարձր արտադրողականություն, վերաբարադրում ենք բազմաթիվ արտադրողներ (մայրեր և բուեր):

Մի տոհմական ընտանիքից ստանում ենք մեծ քանակությամբ բուեր, իսկ մյուս տոհմական ընտանիքից՝ չբեղմնավորված մայրեր և այս վերջիններով փոխում ենք մեր մեղվանոցի մնացած բոլոր ոչ ռեկորդա-

յին մայրերին։ Մեղվանոցի ոչ տոհմական ընտանիքների բուերին ոչնչացնում ենք կամ արգելակում։

Այս ձեի ընտրության չնորհիվ հավասարեցնում ենք տվյալ պապուլյացիայի որակական հատկանիշները, միշտ խոստանալով ոչ ցանկալի Փենոտիպերը։

ՍՍՌՄ-ում, Շվեցարիայում, Գերմանիայում, Զեխոսովակիայում կատարված փորձերը ցույց են տվել, որ եթե ճշուաթյամբ և հետեւողականորեն կատարենք այս ձեի ընտրության բոլոր վերը նշած աշխատանքները, այդ դեպքում մոտ տարիներում կտանանք մի շոշափելի արտադրանք, որը կտարբերվի նախամորից, իր բարձր արտադրողականությամբ։

Այս ձեի ընտրության ժամանակ մենք չգիտենք, թե այն արտադրողները, որոնց մենք բազմացնում ենք մեղվանոցի մնացած մայրերը փոխելու համար, իրենց բարձր արտադրողականությունը լրիվ չափով տալի՞ս են սերնդից սերունդ թե ոչ. այսպիսով մեր Փենոտիպային գնահատականը տվյալ մայրերի մասին կարող է սխալ լինել, որովհետև սերունդներում կնկատվի խայտաբղետություն, գրա համար էլ մենք ստիպված ենք ամեն տարի կրկնել այս ձեի սելեկցիոն աշխատանք, միշտ խոտանելով մեղվանոցի այն արտադրողներին, որոնք ունեն ցածր արտադրողականություն։

11. Անհատական ընտրություն։— Իեկորդիստներ հայտարերելուց հետո մենք նրանցից ստացած արտադրողներին ստուգում ենք, որպեսզի պարզենք, թե այդ մեղուների ունեցած բարձր արտադրողականությունը ժառանգաբար փոխանցվո՞ւմ է սերնդից սերունդ, թե

ոչ։

Եթե մասսայական ընտրության ժամանակ մայրերի ծագման մասին գոյություն ուներ որոշ դիմագրկություն, այստեղ արդեն բոլոր մայրերը համարակալված են լինում և ունենում են իրենց հատուկ գրանցման թերթիկները, որտեղ դրված է լինում նրանց հասակի, ծաղման, ծնողների հատկությունների և այլնի մասին։

Այսպէսի ընտրության ժամանակ ավելի ճիշտ է արտադրողների գնահատականը տալ և չնորհիվ անհատական մոտեցման կարելի է խոտանել այն արտադրողներին, որոնք իրենց արտադրողականությամբ հետ են մնում իրենց նախամայրերից, իսկ մնացածները բազմացնել:

Այս ձեր ընտրության չնորհիվ, մենք մեր մեղմանոցի բոլոր անորակ մայրերը փոխում ենք նախօրոք ստուգված և բարձր արտադրողականություն ունեցող մայրերով:

Առհասարակ թե մասսայական և թե անհատական ընտրությունը չի ամբացնում մեղմների աչքի ընկնող հատկությունները: Մի շարք սերունդներից հետո մեղուները կլավանան և իրենց արտադրողականությունը կդնեն որոշ բարձրության վրա, որից այն կողմ անցնելը մասսայական ընտրության միջոցով անկարելի է, այդ դեպքում պետք է միայն աշխատել նրանց պահել այդ բարձրության վրա: Մասսայական և անհատական ընտրությունը չի տալիս վերջնական արդյունք և նրա միջոցով անհնարի նոր ցեղեր ստանալլ:

12. Գծային սելեկցիա.— Գծային ընտրության ժամանակ մենք դործ ունենք մեկ բարձրորակ ընտանիքի հետ, որից ստանում ենք արտադրողներ (մայրեր և բոռեր) և դրանց բուծում:

Գծային ընտրությունը, կարող է լուծել բարձր արտադրողականությամբ ցեղեր դանելու խնդիրը և նրա չնորհիվ մենք ապագայում կունենանք տարբեր ուղղություն ունեցող գեղեր, օրինակ՝ բարձր մեղրատվությամբ, մոմատվությամբ մեծաքանակ մայրապտուկներ, խնամողներ և այլն:

Գծային և առհասարակ բոլոր ընտրությունների ժամանակ պիտի աշխատել որպես նախամայրեր ընտրել այնպիսիները, որոնք ունեն բարձր արտադրողականություն և այդ ընտրածների վրա տանել որոշ սիստեմի բուծում:

Գծային սելեկցիան սկսելիս պիտի ընտրենք ամենա-

լավ ուեկորդիստներին և համեմատենք իրար հետ. մանրամասն և ճիշտ հաշվառման միջոցով դրանցից ընտրենք այն ուեկորդիստը, որն այդ բոլորի միջից աչքի է ընկնում իր բարձր արտադրողականությամբ, դրանցից ստանանք արտադրողներ՝ 50-100 չբեղմնավորված մայրեր և ամեն մի մայր մեղվի համար մոտավորապես 20-ական բոռ։ Այս արտադրողները մեկուսարանում գուգավորենք քույրը եղբոր հետ։ Զուգավորվելուց հետո նորից ստուգենք այդ եղած մայրերից ամենալավը, նորից գրանցից ստանանք արտադրողներ և մեկուսարանում գուգավորենք քույրը եղբոր հետ։

Անսանապահության մեջ նոր ցեղերի հայտաբերման համար միշտ գործ են ածում ամենանեղ ազգակցական բուժումը (քույրը եղբոր հետ, ձագերը ծնողների հետ)։

Ինչքան ազգակցական բուժումը նեղ լինի, այնքան հատկությունների ամբացդումն արագ կատարվի, բայց կարող են լինել դեպքեր, երբ մեր ընտրած գիծը փոխանակ լավանալու, ավելի վատանա։

Դրա պատճառն այն է, որ մեր ընտրած արտադրողի (ուեկորդիստի) ժառանգական հատկությունների մեջ կան թագնված վնասակար հատկանիշներ. և երբ մենք այդ նեղ ազգակցական բուժման ենք ենթարկում, այդ վնասակար հատկությունները գումարվում են և հաջորդ սերունդներում ի հայտ գալիս։ Իսկ եթե նախամորք ժառանգական հատկությունների մեջ չկան վնասակար հատկություններ, այդ գեղը գումարվում նեղ ազգակցակական բուժումն առանձնապես չի նպաստում նրա սերունդների վատացմանը։

Ընտրության միջոցով պիտի խոտանել այն բոլոր տատանումները, որոնք հիմնական գծից տանում են դեպի վատը. իսկ սերունդների մեջ լավ հատկությունները պետք է ամբացնել և հետագայում ստանալ մաքուր գիծ։

Թե մեղվաբուժության մեջ ինչքան արագ կարելի է մաքուր գիծ ստանալ, դա մեզ ցույց է տալիս համա-

միութենական Մեղլաբուծական ինստիտուտի օրինակը:

Ուկրաինայից բերված մոր սերնդից դուրս են եկել սև աչքանի մեղուներ ու երկու ձեի բոռեր (սև և սպիտակ աչքերով): Հավասար քանակությամբ:

Իհարկե՛ աշխատավոր մեղուներն իրենց մեջ ունեցել են թագնված վիճակում սպիտակ աչք ունեցողի հատկանիշ, որ արտաքին տեսքից չի երևում: Այդ մոր սպիտակ աչք ունեցող բոռի սպերմայով սերմնալորել են սև աչք ունեցող քրոջը, որից ստացել են ոչ միայն սպիտակ աչք ունեցող բոռեր, այլև հավասար քանակությամբ սպիտակ աչք ունեցող մեղուներ և մայրեր:

Այդ սպիտակ աչքով մորը սերմնալորել են սպիտակ աչք ունեցող բոռի սպերմայով, որից հետո ստացել են մաքուր սերմնդ (գիծ): Որտեղական հատկանիշների փոփոխությունը և ամրացումն ավելի դժվար է, քան գույնինը:

Մենք 1934 թ. ստացել ենք սպիտակ աչքերով բոռեր և նման աշխատանք կատարել ու ստացել ենք առաջին սերունդը 50 տոկոսով սև և 50 տոկոս սպիտակ աչք ունեցող բոռեր, որից հետո աշխատանքը չենք շրունակել:

Գյուղատնտեսական անասունների մոտ ամենամոտիկ ազգակցական կապը քույր և եղբոր խաչաձեռումն է, իսկ մի քանի բույսերի մոտ հասարակոր է դեռ ավելի նեղ ազգակցական խաչաձեռում կատարել ինքնափոշուման միջոցով, որովհետև նույն ծաղիկն ունի թե արական և թե իգական սեռական բջիջներ:

Ինքնաբեղմնավորումը մինչև հիմա լինում էր միմիայն բուսականության և ստորին կենդանիների մեջ, բայց չնորդիլ պարտենոգենեզիսի, մոտավորապես նույնանման երևույթ կարելի է ընդունել նաև մեղուների մոտ, որտեղ մայրն արտադրում է միմիայն իգական սեռական բջիջներ՝ ձվեր, իսկ բոռը՝ միմիայն արական սպերմա:

Ամեն մի բոռաձու մայր մեղվի դրած ձվերից դուրս

եկած բոռերի սպերմայով կարելի է արհեստականորեն իրենց մորը սերմնավորել: Բոռաձու մայր մեղվին արհեստական սերմնավորման ենթարկել հնարավոր է: Այդպիսի մի փորձ 1931 թ. կատարել է Ի. Ա. Լիսենկոն: Նա արհեստական սերմնավորման է ենթարկել հին բոռաձու մորը, որը նորից սկսել է ձվել բեղմնավորված ձվեր:

Ի՞չպես տեսանք, բոռն իր ժառանգական հատկություններն ստանում է միմիայն մորից, նա չունի հայր, և երբ մորը սերմնավորում ենք իր տղայի սպերմայով, մայրը ձվելուց հետո սերունդը կունենա միմիայն իր մոր հատկությունները:

Այդ մորից ստացած աղջկան թույլ չենք տալիս զուգավորվելու բոռի հետ, մինչև որ սեառկան ցանկությունն անցնի և նա սկսի զնել չքեղմնավորված ձվեր, որից հետո նույն ձեռով նրան կսերմնավորենք իր տղայի սպերմայով և այդպես շարունակ՝ մինչև 4—5 սերունդ, որից հետո ստացած չքեղմնավորված մայրը՝ մեկուսարանում կզուգավորենք իր եղբոր հետ և այսպիսով կամրացնենք ժառանգական հատկությունները:

A 19293  
Մեղվաբուծության մեջ մի այլ ձեռով նույնպես կարելի է մոտավորապես ինքնաբեղմնավորում կատարել: Օրինակ, մայր մեղվի դրած՝ չքեղմնավորված ձվերը կարելի է բեղմնավորել նույն մոր տղայի սպերմայով: Այդ արհեստականորեն բեղմնավորված ձվերից դուրս եկած որդերը արհեստական մայրահանման միջոցով պատվաստել և ստանալ մայրեր, որոնք նույնպես կձըմվեն, և նրանց դրած՝ չքեղմնավորված ձվերը նույն ձեռով կարելի է բեղմնավորել մինչև 4—5 սերունդ, որից հետո նույնպես մեկուսարանում չքեղմնավորված մորը զուգավորել իր եղբոր հետ և ամբացնել գիծը:

Չքեղմնավորված ձվի բեղմնավորման փորձը 1919 թ. կատարել է անգլիացի Բարատը, որին հաջողվել է չքեղմնավորված ձվերը բեղմնավորել և դրանցից մայրեր ստանալ:

Ինքնաբեղմնավորման միջոցով հնարավոր է 4—5



սերնդից հետո ժառանգական հատկություններն ամբացնել, այնինչ քույրը եղբոր հետ զուգավորվելու դեպքում անհրաժեշտ է 10—15 սերունդ:

Սպակցական բուծման արդյունքը կախված է գըշխավորապես սելեկցիոն աշխատանքից և հիմնական նախամոր որակից, որից և կախված է սերնդի լավացումը կամ վատացումը:

Մեղվաբուծության մեջ նեղ ազգակցական բուծման ժամանակ աչքի ընկնող արտադրողների ժառանգական հատկությունները փորձելու համար հնարավոր է բոռին միմիայն մեկ անգամ զուգավորել քրոջ հետ, իսկ մայրն էլ իր ամբողջ կյանքում մի անգամ է զուգավորվում բոռի հետ, որի շնորհիվ մեղուների մոտ որոշ չափով բարդանում է րրիվ չափով խաչածե զուգավորման արդյունքներ ստանալը:

14. Մայրեր ստանալը և ընտրությունը.— Ինչպես մենք տեսանք ժառանգական հատկությունները փորիանցում են սերնդին արտադրողները (մայրերը և բոռները), իսկ աշխատավոր մեղուներն այդ խնդրում ոչ մի դեր չեն խաղում:

Մայրեր ստանալը ոչ մի դժվարություն չի ներկայացնում: Բավական է այս կամ այն տոհմական ընտանիքի վրա պատվաստ կատարել արհեստական մայրահանման այս կամ այն մեթոդով և ստանալ ցանկացած քանակությամբ պատրաստի մայրավտուկներ, որից հետո նրանցից դուքս կդան տոհմական չբեղմնավորված մայրեր:

Չբեղմնավորված մայրերն ստանալուց հետո, պետք է ընտրություն կատարել նրանց միջև, սկզբից ըստ արտաքին տեսքի (էքստերերի) ընտրել նրանց, որոնք ունեն ավելի փարթամ կազմվածք, մեծ են, Փիզիկապես առողջ, արագաշարժ և գույնով նման են իրենց նախամորը, իսկ մնացածները խոտանել:

Եկատերերով ընտրություն կատարելուց հետո այդ աղջիկներին պետք է տեղավորել նուկլեումներում և մե-

կուսարաններում, դրանց զուգավորել նախապես ընտրած բոռերի հետ:

Զուգավորելուց հետո մայրերը պետք է տալ նորմալ ընտանիքներին՝ նրանց հատկություններն ստուգելու համար: Այդ մայրերի վրա կատարել մանրամասն դիտողություններ և հետազոտություններ ու դրանցից ընտրել այն մայր մեղուները, որոնք աչքի են ընկնում իրենց օգտակար հատկություններով: Այդ մորից նորից պետք է չըբեղմնավորված մայրեր ստանալ և նույն՝ վերոհիշյալ ձեռվ ընտրություն կատարելուց հետո սերունդն ստուգել:

15. Բոռերի ստացումը և ընտրությունը.— Բավական չէ տոհմական մայրեր ունենալը, անհրաժեշտ է այդ տոհմական մայրերին տոհմական բոռերով ծածկել:

Պիտի ասել, որ, եթե մինչև հիմա մայրերի վերաբերյալ կատարվել է որոշ ընտրություն, ապա բոռերի ընտրության մասին ոչ մի աշխատանք չի տարվել, բոլոր ընտանիքներում անխտիր բոռեր դուրս են եկել և ծածկել տոհմական մայրերին:

Բոռերի բուծման համար, աչքի ընկնող ընտանիքներին պետք է տալ ոչ լրիվ մոմաթերթով փակցված շրջանակներ, որպեսզի նրանք հնարավորություն ունենան գործելու բնական նորմալ բուարջիջներ որակավոր արտադրողներ արտադրելու (բոռեր), որոնք կունենան իրենց մոր բոլոր ժառանգական հատկությունները:

Այս հանգամանքը խոշոր ազգակ կհանդիսանա մեղմաբուծական տոհմական տնտեսությունների հիշտ կազմակերպման գործում, որի չնորհիվ կատացվեն մեծ քանակությամբ տոհմական բոռեր:

Ամեն մի մայր ռեկորդիստ իր որակական հատկությունները լրիվ չափով չի տալիս բոռին: Նա այդ հատկությունները լրիվ չափով կփոխանցի բոռին այն ժամանակ, երբ մեզ շահագրգոռող այդ գենը գտնվում է մայր մեղվի ձվարանում (ձվում), իսկ եթե այդ հատկության գենը գտնվում է բոռից ստացված սպերմայի

մեջ, այդ դեպքում այդ տոհմական մորից ստացված բոռը կունենա բոլորովին չափամական հատկություններ, այսինքն՝ իսկական մոր հատկությունները:

Եղնելով վերոհիշյալից՝ բոռաբուծության համար հատկացվելիք առհմական ընտանիքի մորը պիտի նախօրոք ստուգել և հետո զբաղվել բոռաբուծությամբ:

Առհմասաբակ տոհմական բոռն իր արտադրողականությունը և ժառանգական բոլոր հատկությունները տալիս է մորը և աշխատավոր մեղուներին, իսկ տոհմական մայրն իր ժառանգական հատկությունները տալիս է մայրերին, բոռերին և աշխատավոր մեղուներին: Որպեսզի մենք ապահովված լինենք, բոռաբուծությամբ զբաղվելիս ոչ թե բոռերը պիտի ստանանք աչքի ընկնող ուեկորդիստից՝ տոհմական մայրերից, այլ նրանց աղջիկներից:

Բոռահանձման աշխատանքները պիտի սկսել իր ժամանակին, այսինքն՝ մայրահանձմից առաջ, որպեսզի առաջին դուրս եկած մայրն իր ժամանակին կարողանա զուգավորվել, որովհետեւ բոռը, ինչպես մենք տեսանք, սեռականապես հասունանում է 12–20 օրական հասակում, դրա համար այդ ժամանակաշրջանը պիտի հաշվի առնել և հետո սկսել մայրահանձման աշխատանքները:

16. Մասսայական տոհմափոխությունը մեղվարուծության մեջ.— Մասսայական տոհմափոխության գործը մեղվարուծության մեջ զժվար է կատարել, որովհետեւ մայրը բոռի հետ զուգավորվում է օղում, մարդկանց կոնտրոլից հեռու: Այս հարցի հաջող լուծման համար շատերն առաջարկել են կազմակերպել հատուկ մեկուսացված զուգավորման կայաններ, որտեղից կարելի լինի ստանալ զուգավորված տոհմական մայրեր և այդ մայրերով փոխել տնտեսության բոլոր մայրերը:

Այս եղանակը ճիշտ է, բայց կապված է մի շարք տեխնիկական անհարմարությունների հետ և մեծ ծախսեր է պահանջում:

Պարտենոպենեղիսի միջոցով այստեղ կարող ենք

լուծել մասսայական ցեղափոխության պրոբլեմը՝ հասարակ և նպատակահարմար ձևով։

Ենթադրենք, որ մեր պապուլացիաների ուսումնասիրության վերջում հանգեցինք այն եզրակացության, թե Շամշադինի պապուլյացիան ունի մի շարք առավելություններ, որը, ենթադրենք, չունի Մեղրու մեղունների պապուլացիան, և մենք ենք ենելով այդ առավելություններից՝ ուզում ենք Մեղրու մեղվի պապուլացիան փոխել Շամշադինի պապուլացիայով։ Այդ նպատակին հասնելու համար բավական է Շամշադինից ստանալ 5 բեղմնավորված և զտարյուն մայր։

Ամբողջ Մեղրու շրջանում եղած մեղվի ընտանիքների մայրերը փոխելու համար այդ 5 մայրերից, մասսայական մայրահանման միջոցով, աստիճանաբար կստանանք այնքան մայր, որքան անհրաժեշտ է ամբողջ շրջանի համար։

Ենթադրենք, որ ամբողջ Մեղրու շրջանի համար պետք է 1500 մայր մեղու։ Մենք աստիճանաբար, այդ 5 մայրերից ամբողջ սեզոնի ընթացքում ստանում ենք 1500 չբեղմնավորված մայրեր և դրանցով առաջին տարում փոխում ամբողջ շրջանի տեղական մայրերը։

Մեր տվյած՝ Շամշադինի այդ չբեղմնավորված մայրերին կծածկեն Մեղրու տեղական բոռերը և այդ մայրերից կստացվեն սեզոնների մետիս մայրեր, աշխատավոր մեղուներ և Շամշադինի զտարյուն բոռեր։

Երկրորդ տարին մենք նորից մասսայական մայրահանման միջոցով վերոհիշյալ 5 մայրերից կստանանք մեղ անհրաժեշտ քանակությամբ չբեղմնավորված մայրեր և դրանցով նորից կփոխենք Մեղրու շրջանի բոռը մեր տվյած մայրերը։ այդ չբեղմնավորված մայրերին կծածկեն ընտանիքներում եղած՝ Շամշադինի բոռերը (տեղական բոռեր արդեն չկան, որովհետև բոռերն ապրում են միմիայն մեկ սեզոն)։

Այդ զուգավորված մայրերից ստացված սերունդը կլինի Շամշադինի զտարյուն սերունդը (մայրեր, աշխատավոր մեղուներ և բոռեր)։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ սելեկցիոն աշխատանքները և մասսայական տոհմափոխության աշխատանիքները մեծ մասամբ կախված են արհեստական մայրահանման և բոռահանմն հետ, որը հնարավոր է կատարել, բայց որովհետև առայժմ մենք մեր կոլլաողներում և սովորողներում չունենք որակավոր կադրեր, որոնք կարողանան իր բոլոր մանրամասնությամբ այդ աշխատանքները կատարել, դրա համար էլ անհրաժեշտ է առայժմ մեր բոլոր մեղվանոցներում մասսայական ընտրություն կատարել:

### ՄԱՅՐ ՄԵՂՈՒՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Մայր մեղուների արհեստական սերմնավորումը խոշոր պրոբլեմ է մեղվաբուծության մեջ. վերջինիս հաջող լուծումով մեղվաբուծության զարգացումն ավելի արագ թափով առաջ կընթանա, որով հնարավոր կլինի բազմակողմանի աշխատանք կատարել մեղուների ցեղերի և պապուլացիաների բարելավման բնագավառում:

Ով քիչ թե շատ ծանոթ է մեղուներին կյանքի և նրանց արտադրական խնդիրներին, նա գիտի, որ մայր մեղուների զուգավորումը բոռի հետ կատարվում է օդում՝ մարդկանց հսկողությունից զուրս:

Եթե ընտրում ենք մեղուների տոհմական մայրեր և դրանց միջոցով ուղում ենք բարելավել մեր տեղական պապուլացիաները, հաճախ դրանցից ստացած մայրացուները, սեռականապես հասունանալուց հետո, զուգավորվելու համար փեթակներից դուրս են թռչում և օդում հանդիմելով պատահական, տնտեսական օգտակարության տեսակետից չուսումնասիրված բոռերի, զուգավորվում են նրանց հետ և մերադառնում փեթակ: Այսպիսով մեր ամբողջ աշխատանքը տեղական պապուլացիաները, բնդհակառակը, փոխանակ լավանալու, կարող է ավելի վատորակ դառնալ:

# ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՍԵՐՄՆԱՎՈՐՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՒՄ

Փորձի համար հիմնականում վերցրինք 100 մայր մեղու և տեղավորեցինք նախօրոք պատրաստված նույշ նաքանակ նուկլեուսներում։ Այդ նուկլեուսների արկանցներին հագցրինք հատուկ ապարատներ, որոնց անցքերից աշխատավոր մեղուները կարող էին ներս ու դուրս անել, իսկ մորը և բոռին այդ հնարավորությունից զրկեցինք։

Մայր մեղուները նուկլեուսներին տալուց անմիջապես հետո կտրում էինք նրանց մի կողմի թևերը։ Այնպես որ եթե մայրերը ցանկություն ունենային բնական կարգով զուգավորվելու, նախ՝ չէին կարող այդ ապարատներից դուրս գալ և երկրորդ՝ եթե մի բոպե ենթադրենք, որ նրանք փոքր լինելով ապարատի անցքերից կարող էին դուրս գալ, այնուամենայնիվ չէին կարող թռչել։

Այս բոլորից հետո, եթե մայրը հաջող սերմնավորվեր և սկսեր կանոնավոր ձվարկել, ոչ մի խոսք չէր կարող լինել նրա բնական զուգավորման մասին։ Բոռերը վերցրինք պատահական ընտանիքներից և նրանցով կատարեցինք արհեստական սերմնավորում։ Բոռերի հասունացումն ստուգում և ընտրում էինք ներքոհիշյան ձեռով՝ բոռի գլուխը կտրում էինք, եթե սեռական օրգաններն անմիջապես ցցվում էին դուրս և սերմնահեղուկը սերմնապարկում դեղնավուն էր լինում, ապա այդ բոռը հասունացած էինք համարում և դրանով կատարում սերմնավորման գործողությունը։

Ապարատից զգուշությամբ մայրը հանում էինք և կոնակի վրա կապում գործողության սեղանի վրա հատուկ ձև տիած փորմածքի մեջ, որտեղ նրա որովայնն աղատ էր մնում։ Գործողության սեղանը դնում էինք 10—15 անգամ մեծացնող խոչըրացույցի տակ և ամրացնում, որպեսզի չարժի սերմնավորման ակտը կատարելիս, հետո վերցնում էինք բոռը և պոկում նրա գլուխը։ Եթե բոռը համապատասխանում էր մեր պա-

հանջներին, նրան զգուշությամբ դնում էինք սեղանին՝ կոնակի վրա, որից հետո աջ ձեռքով վերցնում էինք բժշկական բարակ պինցետը, իսկ ձախ ձեռքով՝ անտոմիական ասեղը։ Ասեղով գտնում և բաց էինք անում մայր մեղվի հեշտոցը, հետո պինցետի երկու բարակ ծայրն անց էինք կացնում մեջը և զգուշությամբ ասեղը ցած դնում ու պինցետը բռնում ձախ ձկոքով, որպեսզի հեշտոցը չփակվի։ Հետո աջ ձեռքով վերցնում էինք բոռը և բռնում բթամատի ու ցուցամատի արանքում, այնպես որ մեջքը լինի դեպի ցած, իսկ գլուխը՝ դեպի մեզ և զգուշությամբ մոտեցնում մորը, բոռի անդամը մտցնում մայր մեղվի հեշտոցը և պինցետը հեռացնում։ Եթե մայրը բոռի անդամը ձգում էր դեպի հեշտոցի ներսը և սկսում էր հեվալ, նշանակում է գործողությունը կատարվել էր հաջող։ Գործողությունից հետո վերցնում էինք փոքրիկ սուր մկրատ և զգուշությամբ կըտրում բոռի սեռական օրգանը, որպեսզի անդամը սերմնապարկի հետ միասին երկար մնա մոր հեշտոցում։ և սպերման բոլորովին ներծծվի մայր մեղվի սերմընդունարանում, իսկ լորձը լցվի հեշտոցը։

Սերմնավլորումը կատարելուց հետո մայր մեղվին գործողության սեղանի վրա ավելի երկար էինք պահում, քան ուրիշներն արել են այդ։ Սերմնավլորման գործողությունը վերջանալուց 15–20 րոպե հետո մորը գործողության սեղանից արձակում և դնում էինք մայրավանդակի մեջ, վանդակի տակից կպցնում բարակ մոմի շերտ և վերադարձնում նույն նուկլեուսին, որից վերցրել էինք։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Մայր մեղուն կանդակով վերադարձնում ենք նուկլեուսին, որպեսզի գործողության ընթացքում եթե մայր մեղվի բնական հոտը փոխվի, մեղուներն իրենց մորը չըսպանեն։

Ապա մայրը նուկլեուսից հանելուց հետո ապարատը կրկին ամրացնում էինք արկանոցին և նորից շարունա-

կում հսկողությունը։ Եթե նուկլեուսը սերմնավորված մորին ընդունում է, անմիջապես վանդակի տակի մոմի բարակ չերտը ծակում և մերը դուրս էինք հանում; իսկ եթե ոչ, սպասում էինք մինչև որ գործողության ընթացքում մոր ձեռք բերած օտար հոտը նմանվեր իրենց ընտանիքի յուրահատուկ հոտին և հետո ազատում էինք, ծակելով բարակ մոմի շերտը։

Մայրը նուկլեուսին վերադարձնելուց հետո, եթե սերմնավորումը հաջող չէր կատարվել, նա 2-րդ՝ 3-րդ անգամ զուգավորման ցանկություն էր ունենում և դուրս գալիս ապարատը։ Այդ դեպքում սերմնավորում էինք թեկուղ երրորդ անգամ և այդ բոլորը վերը նշված ձևով մանրամասն արձանագրում։

Սերմնավորումը կատարելուց հետո, եթե մայրը երրորդ կամ չորրորդ օրը դուրս չէր գալիս ապարատը, մենք ստուգում էինք մոր ողջ կամ մեռած, կամ անհայտացած լինելը (կարող էր մայրը փոքր լինել և ապարատի հանեմանյան ցանցից դուրս գալ և կորչել, որովհետեւ մի կողմից թեր կտրված է և չի կարող թուչել), իսկ եթե մայրը գտնվում էր նուկլեուսում՝ նշանակում էր՝ կամ գործողությունը հաջող է անցել, այսինքն՝ սերմնավորվել է, կամ զուգավորման ցանկությունն արդեն կորցրել է։

Եթե մայրն սկսում էր ձվել, նշանակում էինք օրը և սպասում, թե այդ ձվերից ինչպիսի հարսնյակներ կստացվեն, բոռի<sup>o</sup>, թե աշխատավոր մեղվի։

Եթե ստուգման ժամանակ պարզվեր, որ մայրը բոլորովին չքեղմնավորված ձվեր է դնում, որոնցից ստացվում են բոռեր, ապա դա չի նշանակում, որ մայրը սերմնավորված չէ և պետք է այն ոչնչացնել, այլ պիտի սպասել առնվազն 15–20 օր, որովհետեւ եղել է զեպք, երբ մայրն սկզբից ձվել է բոլորովին չքեղմնավորված ձվեր, իսկ մի քանի օր հետո նույն մայրը սկը սել է կանոնավոր կերպով դնել բեղմնավորված ձվեր։ Այդպիսին պատահեց 1933 թ. մեզ մոտ՝ № 65 մայր մեղվի հետ։

Մի քանի օր հետո, երբ նորից ստուգեցինք այդ բնապանիքը, պարզվեց, որ № 65 մայրը հուլիսի 10-ից սկսել էր ամբողջապես բեղմնավորված ձվեր դնել: Նրան տեղավորեցինք (3—4 լանգստրոտի շրջանակ պատող) ընտանիքում, որտեղ սկսեց ձվել նորմալ կերպով և օգոստոսի 10-ին ուներ 2100 աշխատավոր մեղվի կնքված հարսնյակ:

Մեր վերցրած 100 մայր մեղվից փորձարկվեցին միայն 69-ը, իսկ մնացածներից 6-ն ըստ երևոյթին սեռական զգացմունքներից գուրիկ էին, բոլորովին դուրս չեկան բոռերի հետ զուգավորվելու և նույնիսկ չձվեցին ըբեղմնավորված ձմեր: Դրանցից վեց մայր մեղու դուրգավորելու ցանկություն հայտնեցին, բայց մենք նրանց չսերմնավորեցինք, մնացած 19 մայրերը ըստ երևոյթին եղել են անհամեմատ փոքր և ապարատի հանեմանցան ցանցից դուրս գալով անհայտացել էին:

Վերոհիշյալ 69 մայր մեղվի վրա կատարեցինք սերմնավորման՝ 116 գործողություն:

|    |      |       |     |            |        |       |          |    |       |
|----|------|-------|-----|------------|--------|-------|----------|----|-------|
| 32 | մայր | մեղվի | վրա | կատարեցինք | 1-ական | գործ. | ընդամենը | 32 | գործ. |
| 27 | »    | »     | »   |            | 2-ական | »     |          | 54 | »     |
| 10 | »    | »     | »   |            | 3-ական | »     |          | 30 | »     |

Այդ 69 մայր մեղվից 54-ն սկսեցին ձու դնել, որոնցից բոլորովին չըբեղմնավորված ձվեր տվին . . . . . 39 մայր խառը ձվեր . . . . . 3 մայր բեղմնավորված ձվեր . . . . . 12 մայր

(Տես № 1 աղյուսակը)

Մաքուր բեղմնավորված ձվեր գրել են 65, 11, 36, 27, 17<sup>o</sup> 22, 49, 13, 77, 85, 91, 83 համարները:

Խառը բեղմնավորված և չըբեղմնավորված ձվեր գրել են

№ № 20-ը՝ 60 տոկոսով բեղմնավորված ձվեր

» 16-ը՝ 70 » » »

» 50-ը՝ 87 » » »

աՄյրերից № 77-ը տեղավորեցինք ընտանիքում: 1934 թ. ապրիլի 30-ին № 77 ընտանիքն ուներ 350 գրամ

մեղու և 2500 կնքված որդեր: Մեղումերը պատռմ էին  
Յ Արքի շրջանակ, իսկ կերապաշարը չառ քիչ էր:

Սյու ընտանիքին որպես կոնտրոլ կազմակերպեցինք  
նույն որակի և քանակի մի ուժից ընտանիք, որին տը-  
վինք 1933 թ. բնական ճանապարհով զուգավորված  
մայր մեղու: Ապրիլի 30-ին այս ընտանիքի մեղուները  
կշռում էին 380 գրամ և ունեին 2400 կնքված որդ:

Սկսած 1934 թ. ապրիլի 30-ից մինչև սեպտեմբերի  
20-ը վերոհիշյալ երկու ընտանիքների նկատմամբ կա-  
տարեցինք սեստեմատիկ հաշվառումներ: Կնքված որդի  
հաշվումների գլխավոր նպատակն էր նույնանման պայ-  
մաններում այդ երկու ընտանիքի մայրերի որակը հա-  
մեմատության դնել իրենց բեղունակության (ձվերի  
քանակը 24 ժամվա ընթացքում) տեսակետից, որը  
առվեց հետևյալ արդյունքը.

Կնքված որդի դիմամիկան՝ սկսած մայիսի 30-ից մինչև  
սեպտեմբերի 20-ը

| Կոնդուտոր | 77 | 350 | Հնատանիքի մեջ 30/4 ունե-<br>ցել է ժեղու-<br>գում |      | 30/4 ունեցել է<br>կնքված որդ | 11-ր մայիսի<br>23 մայիսի<br>4 հունիսի<br>16 հունիսի<br>28 հունիսի<br>10 հունիսի<br>22 հունիսի<br>3 օգոստոսի<br>15 օգոստ. | Ստացված<br>պրոդուկցիան |      |       |       |       |      |      |      |      |      |      |     |        |
|-----------|----|-----|--|------|------------------------------|--|------------------------|------|-------|-------|-------|------|------|------|------|------|------|-----|--------|
|           |    |     | 2400   | 4200 | 4900                         | 6200   | 7900                   | 7600 | 12900 | 11500 | 10900 | 4200 | 8000 | 5900 | 3300 | 1:00 | 8630 | 644 |        |
|           |    |     | 2500   | 400  | 6000                         | 6000   | 7300                   | 7800 | 11300 | 12400 | 9500  | 4600 | 6100 | 4600 | 4600 | 3600 | 600  | 803 | 5      |
|           |    |     |  |      |                              |  |                        |      |       |       |       |      |      |      |      |      |      |     | 8      |
|           |    |     |  |      |                              |  |                        |      |       |       |       |      |      |      |      |      |      |     | 603    |
|           |    |     |  |      |                              |  |                        |      |       |       |       |      |      |      |      |      |      |     | —      |
|           |    |     |  |      |                              |  |                        |      |       |       |       |      |      |      |      |      |      |     | 27     |
|           |    |     |  |      |                              |  |                        |      |       |       |       |      |      |      |      |      |      |     | օգոստ. |
|           |    |     |  |      |                              |  |                        |      |       |       |       |      |      |      |      |      |      |     | օգոստ. |

Այս տվյալներից մենք տեսնում ենք, որ առանձնա-  
պես խոչըն որակական տարրերություն չի նկատվում  
բնական ճանապարհով զուգավորված և արհեստականո-

թեն սերմնավորված մայր մեղուների երկրորդ տարվա ձվարկության միջև :

## ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՄԱՅՐԱՀԱՆՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Արհեստական մայրահանման մեթոդը առաջարկված է ամերիկացի մեղվաբույժի կողմից : 1882 թ. Ալեքս առաջին անգամ հրատարակեց իր աշխատանքը : 1889 թ. Դուլբետը առաջարկեց մայրահանման համար թրթուրը (որդը) տեղափոխել թասակի մեջ, բայց շատ տարիներ առաջ 1860 թ. Գուսեվը համառուսական ցուցահանդեսում մեղալ ստացավ, արհեստական մայրահանման և ռացիոնալ մեղվաբուծություն կատարելու համար :

Մեղվաբուծական տնտեսություններում որակի համար պայքար պետք է տարիքի ոչ միայն մեղվի ընտանիքների խնամքի և կերակրման պայմանների բարելավման, այլև նրանց ժառանգական հատկանիշների բարելավման, մեղուների արտադրողականությունը բարձրացնելու ուղղությամբ :

Մեղվաբուծության մեջ մեղուների մայրը, ինչպես մենք տեսանք, հանդիսանեամ է մեղվի ընտանիքի առանցքը, ընտանիքի ամբողջ զարգացման ընթացքը, ուստի նրա պարտադրողականության չափը մեծապես կախված է մոր ժառանգական հատկանիշներից :

Վերոհիշյալն ինքնին ցույց է տալիս, թե ինչ մեծ նշանակություն ունի մայրերի որակը, այդ իսկ պատճառով մայրեր պետք է ստանալ այնպիսի ընտանիքներից, որոնք ունեն բարձր արտադրողականություն և ընդհանրապես մեզ հետաքրքրող տնտեսապես օգտակար հատկանիշներ :

Արհեստական մայրահանման աշխատանքների ծավալումը մեղվանոցներում սերտորեն կապված է սելեկցիոն աշխատանքների հետ և դա սելեկցիոն աշխատանքի սկիզբն է մեղվաբուծության մեջ :

Եթե առաջներում արհեստական մայրահանման աշխատանքները ղեկավարում էին միմիայն հատուկ մայ-

բարուծարաններ, որոնք զբաղվում էին «զտարյուն» մայրեր ստանալով և վաճառելով, ներկայումս արդեն, արհեստական մայր կարող է ստանալ մեղվաբուծական կուրսերում սովորած յուրաքանչյուր տեխնիկակապահը, որն աշխատում է կոլյոզի մեղվանոցում:

Մեղվի ընտանիքների ինտենսիվ բազմացումն ու ընտանիքներից ավելի շատ մեղր և ձագեր ստանալը սերտութեն կապված է արհեստական մայրահանման հետ: Այն մեղվանոցները, որոնց մեղվապահները լավ յուրացրել են մայրահանման աշխատանքները և տարեց տարի անց են կացնում բարձր արտադրողականություն ունեցող մայրերի ընտրությունը, այդ մեղվանոցներում տարեց տարի բարձրանում է մեղվի արտադրողականությունը, օրինակ՝ Կուրսկի մարզի մի քանի շրջաններում՝ 1936 թ. կատարելով արհեստական մայրահանումից ստացած ընտրված մայրերի սերունդների ստուգում, մի սեղոնի ընթացքում հայտաբերել են 241 սեղորդիստ մայրեր:

| 6 մայր համեմատած սովորական ընտանիքների հետ բարձրացրել են իրենց<br>արտ. 100 տ. |   |   |   |   |   |   |
|---|---|---|---|---|---|---|
| 71  | » | » | » | , | » | » |
| 98  | » | » | » | , | » | » |
| 47  | » | » | » | , | » | » |
| 19  | » | » | » | , | » | » |

## ՄԵՂՈՒՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՄԱՅՐԱՀԱՆՈՒՄԸ

Մեղուներն իրենք, առանց մեղվապահի միջամտության, տարվա որոշ ժամանակաշրջանում կարող են մայրեր հանել, օրինակ՝ մայրը պատահականորեն կորչելու, մեռնելու դեպքում, որը հաճախ կարող է տեղի ունենալ մեղվապահի անփութության հետևանքով ընտանիքները նայելիս, կամ մեղուները մի փեթակից մյուս փեթակը տեղափոխելու ժամանակ, մեղրաքամի ու մեղուները տեղից տեղ տեղափոխելու ժամանակ և այլն: Մեղուներն աշխատավոր մեղվի փոքրահասակ

որդերի վրա բջիջները լայնացնելով պատրաստում են մայրապտուկներ, և թրթուրներին, որդերին կերակրում կաթնահույթով. դրանցից գուրս են գալիս մայրեր:

Զաղատվության շրջանում մեղուները պատրաստում են մայրաբջիջների հիմքեր (թասակներ), որոնց մեջ մայրը դնում է ձվեր, իսկ աշխատավոր մեղուները դրանց կերակրում են որպես մայրացներ, և դրանցից առաջանում են մայրեր:

Ինական մայրահանման այս երկու ձևերն էլ գեռ մեր արտազդության մեջ խոշոր տեղ են բռնում: Երբ մեղվապահին անհրաժեշտ է վաղ գարնանը կամ աշնանը մայրեր, նա վերցնում է մայր ունեցող ընտանիքներից շրջանակով որդ ու ձու և տալիս է անմայր ընտանիքին. անմայր-ընտանիքն այդ որդ ու ձվերից պատրաստում է իր համար մայր. նրանք աշխատավոր մեղվի բջիջներում գտնվող 1—2 օրվա որդերին սկսում են կերակրել առատ, մննդարար կերով, աշխատավոր մեղվի բջիջները լայնացնում, ձևափխում և կառուցում են մայրաբջիջներ, բայց որովհետև որը ընտանիքի բոցոր հապակի ջահել և գառամած մեղուներն էլ գտնվում են գրգուված վիճակում, հաճախ լինում են դեպքեր, երբ մայրաբջիջները պատրաստում են երկու օրվանից բարձը մեծահասակ որդերից որոնցից ավելի չուտ մայրը կծնվի և կոչնչացնի մնացած մայրապտուկներին, որոնք կառուցված էին ավելի փոքրահասակ նորմալ որդերի վրա: Փորձերը ցույց են տվել, որ այս ձևով ստացված մայրերի 75 տոկոսը լինում են ոչ լիարժեք, դրանց մեջ լինում են մեծաքանակ դաճան մայրեր, լինում են մայրեր, որոնք ունեն աշխատավոր մեղվի նշաններ — օրինակ՝ մոմային հայելիներ, կամ ոտերի վրա ունեն զամբյուղներ և այլն: Պարզ է, որ այսպիսի մայրերը չեն կարող լինել բավ որպես և նրանց օրեկան դրած ձվերի քանակը չատ քիչ կլինի:

Զաղատվության ժամանակ պատրաստված մայրապտուկները մեծ մասամբ մեղվապահներն օգտագործում

Են հին ծերացած ու դեֆեկտավոր մայրերը փոխելու համար. այսպիսի մայրապառուկներ ձագատվության ջրջանում լինում են մեծաքանակ, որը մեղվապահն օդագործում է առանց նեղություն կրելու: Այս երկու տեսակ բնական մայրահանման տեսակների ընդհանուր պակասությունը նրանումն է, որ կրում են պատահական բնույթ: Մեղվապահը մայրացուների համար վերցնում է որդերը պատահական ընտանիքից, մեղվի արտադրողականության վրա ոչ մի ուշադրություն չի դարձնում: Զագ տվող ընտանիքներից վերցնում են մայրապտուկներ և փոխում են մեղվանոցի դեֆեկտավոր մայրերին ու որակի վրա անմիջապես ուշադրություն չեն դարձնում:

Արհեստական մայրահանումը տարբերվում է բնական մայրահանումից նրանով, որ երկրորդ դեպքում մեղուները իրենք են մայր հանում պատահական ընտանիքներում (ձագատվության կամ աշխատավոր մեղվի որդից աշխատավոր մեղվի բջիջները լայնացնելով), իսկ արհեստական մայրահանման ժամանակ մեղվապահը ինքն է մեղուներին հարկադրում պատրաստել մայրեր իր ընտրած ուեկորզային ընտանիքներից վերցրած նորմալ փոքրահասակ որդերից:

Արհեստական մայրահանումը հիմնավորվում է մեղվաբուծությանն արդեն վաղուց հայտնի այն երկույթով, որ երր մեղուներն այս կամ այն պատճառով կորցնում են իրենց մորն, իրենց ընտանիքում եղած փոքրահասակ աշխատավոր մեղվի որդերից, նրանց առատ կերակրելով և բջիջների վերափոխելու միջոցով, պատրաստում են մայրեր: Այստեղից հետեւում է, որ արհեստական մայրահանում կարելի է կատարել այն դեպքում, եթե ունենք՝

1. Մայր ընտանիք (տոհմական), որից պետք է ստանալ որդեր ու ձվեր՝ մայրացուներ խնամելու համար:

2. Խնամող ընտանիք, որը մեր տված տոհմական որդերին ու ձվերին խնամի որպես մայրացուներ:

Տոհմական ընտանիքները պետք է ընտրել մեղվանցի. այսպիսի ընտանիքներից, որոնք նույնանման խնամքի, կերակրման և կլիմայական պայմաններում աչքի են ընկնում. իրենց բարձր արտադրողականությամբ։ Այս ընտրած ընտանիքները պետք է բաժանել հիմնականում երկու խմբի. առաջինը տոհմական մայր ընտանիքներ, որոնցից պետք է ստանալ որդ ու ձվեր տոհմական մայրեր ստանալու համար, իսկ երկրորդը խումբը՝ տոհմական հայր արտադրող ընտանիքներ, որոնցում պետք է բուծել տոհմական բուեր։

Բացի տոհմական ընտանիքներից, անհրաժեշտ է նաև ունենալ խնամող ընտանիքներ, որոնք պետք է լինեն ուժեղ 1,5—2 կտ. մեղվով ու կերի առատ պաշարով։ Խնամող ընտանիքները պետք է լինեն բոլոր տեսակի հիմքանդություններից գերծ։

Տոհմական մայր ընտանիքներից միահասակ որդեր և ձվեր ստանալու համար անհրաժեշտ է, որ մայրը 1—2 օրով դրվի մեկուսարան, որտեղ նա համատարած կերպով կձվի այդ նպատակի համար դրած չեչի՝ մոտավորապես բոլոր բջիջներում։

Բոռաբուծության հատկացված տոհմական ընտանիքների մեջտեղում պետք է զնել բոռաչեչեր, և այդ ընտանիքներին սիստեմատիկաբար կերակրել գրգռիչ կերպով, որպեսզի մայրն այդ բոռաբջիջներում ձվի ըբեղմնալորված ձվեր։ Մեզվանոցի մյուս ընտանիքներում պետք է պայքար տանել բոռերի զեմ, որպեսզի հնարավորության չափով մայրերի զուգավորումը կատարվի տոհմական բոռերի հետ։

Արհեստական մայրահանման եղանակները բաժանվում են երկու խմբի։

ա) երբ որդերը բնական բջիջներից փոխադրում ենք արհեստական բջիջների մեջ ու որպես մայրացուներ տալիս ենք խնամող ընտանիքներին։

բ) երբ որդերը տալիս ենք խնամող ընտանիքներին որպես մայրացուներ՝ իրենց բնական բջիջներով։

Այս երկու եղանակներն էլ ունեն իրենց դրական և

բացասական կողմերը։ Օրինակ, որդերի փոխադրման  
եղանակի դրական կողմն այն է, որ խոշոր մայրաբու-  
ծական տնտեսություններում այդ նպատակի համար  
չեն ոչնչացնի մեծ քանակությամբ չեչեր, որո՞ք մեղ-  
մաբուծական տնտեսությունների համար չատ թանգ  
արժեն։

Այդ եղանակի բացասական կողմն այն է, որ այս  
եղանակով մայրահանում կատարելու համար անհրա-  
ժեշտ է ունենալ հատուկ սարքավորում, տաքացրած  
սենյակ, մասնագետ — մեղվաբույծ, որը տիրապետում  
է մայրաբուծության տեխնիկային։

Երկրորդ եղանակի դրական կողմն այն է, որ չի  
պահանջում հատուկ սարքավորում և մասնագետ-մեղ-  
վաբույծ, իսկ բացասական կողմն այն է, որ մեծ մայ-  
րաբուծական տնտեսություններում մայրահանման աշ-  
խատանքների համար անհրաժեշտ է ունենալ մեծ քա-  
նակությամբ չեչեր։


Մեր արտադրության մեջ այս երկու եղանակներ-  
ից ամենից չատ օգտագործվում է երկրորդ եղանակի  
այս կամ այն վարիանտր։

### ՄԱՅՐԱՀԱՆՄԱՆ ՊԵԽԱԶԵԿԻ ԵՂԱՆԱԿԸ

Այս եղանակը մեր պայմաններում տալիս է չատ  
լավ արդյունք, որովհետեւ այս եղանակը չունի այն  
բարդություններն ու նրբությունները, ինչունին են  
Պռատի, Պերեմիզոնովի եղանակները։

Երբ տոհմական ընտանիքի մայրը մեր դրած շըր-  
ջանակից վրա արդեն ձվել է, 2—3 օր հետո պետք է  
վերցնել այդ չեչը, տանել աշխատանքի սենյակը, դնել  
հարթ սեղանի վրա ու տաքացրած սուր դանակով հե-  
ռացնել յուրաքանչյուր չորս շաբք բջիջներից 3 շաբքը,  
իսկ հետո ատամի փոքր խոզանակով ոչնչացնել այդ հե-  
ռացրած երեք շարքում եղած որդերը և ձվերը, իսկ  
մնացած բջիջների բերաննեոր փայտե փոքրիկ կաղա-

պարով լայնացնել և այդ ձևով տալ խնամող ընտանիքին. (տես նկար № 4):



Նկ. 4

4. Մայրահանման Պեխաչեկի եղանակը (Պեխա եկ-Գոպկենսի)

Խնամող ընտանիքին մայրացուներ տալուց 2—3 ժամ առաջ պետք է այն որբացնել, այսինքն խնամող ընտանիքի մայրը և նրանում եղած բոլոր բաց ձվերն ու որդերը հեռացնել և ընտանիքում թողնել միմիայն կնքված հարսնյակներ:

Խնամող ընտանիքը որբացնելու ժամանակ պետք է շատ զգույշ լինել, որպեսզի փակ հարսնյակների բջիջների արանքներում բաց ձվեր ու որդեր չմնան, որովհետեւ բավական է, որ խնամող ընտանիքում մի քանի հատ բաց որդ ու ձու մնան, որպեսզի մեր ամբողջ աշխատանքն իզուր կորչի: Այդպիսի դեպքերից խուսափելու համար հաճախ խորհուրդ է տրվում խնամող ընտանիքներին որբացնելու ժամանակ նրանցից հանել բոլոր տեսակի որդերն ու ձվերը (բաց կամ փակ — դա միևնույն է). այս դեպքում մեղվի ընտանիքն իր որբությունն ավելի շուտ է զգում և մեղուներն ավելի շատ են գրգռվում, որի շնորհիվ խնամում են մեծ քանակությամբ մայրացուներ: 1—2 օր հետո խնամող ընտանիք

ներին նորից պետք է վերադարձնել իրենց կնքված որդերը, որպեսզի նրանք չափից ավելի չթուլանան:

Մայրացուներով պատվաստված չեշը պետք է դնել խնամող ընտանիքի բնի շրջանակների վրայից՝ մայրացու բջիջների բերանները դեպի ցած: Իհարկե, այդ մայրացուներով չեշի տակից պետք է դնել նույն շրջանակի մեծության 3—3,5 ամ. բարձրությամբ մի այլ շրջանակ, որով մեղուներին հնարավորություն կտրվի կառուցել մայրապտուկներ ազատ տարածության մեջ, առանց կպցնելու բնի շրջանակներին:

Խնամող ընտանիքին պատվաստում տալուց հետո բնի կողքերից պետք է տալ արհեստական տաքացումներ (տաք ջրով), վրայից պետք է դնել բարակ դեկտի կտոր՝ շրջանակի մեծությամբ. որպեսզի այս բոլորը չխանճարի կափարիչի ծածկելուն, պետք է կափարիչի և բնի արանքում դնել վերնահարկ, որի մեջ կտեղավորվի պատվաստման չեշը և նրա վրայից դնել տաքացման բարձր: Խնամող ընտանիքին սիստեմատիկաբար ամեն օր պետք է առատ կերակրել մինչև մայրապտուկների կնքելը:

Պատվաստումը տարուց 9—10 օր հետո պետք է խնամող ընտանիքներից հասունացած մայրապտուկները վերցնել և բաժանել նոր կազմակերպված ատվողկաշներին և նույիեռուներին: Ուշացնելու դեպքում կարող է մեկ մայր ծնվի և մյուս մայրապտուկներն ոչնչացնի:


### ՄԱՅՐԱՀԱՆՄԱՆ ՑԱՆԴԵՐԻ ԵՂԱՆԱԿԸ\*)

Այս եղանակը մեզ մոտ, արտադրության մեջ նույնպես գտել է խոշոր ընդունելություն իր մատչելի և պարզ տեխնիկայի չնորհիվ:


Այս եղանակի էությունը կայանում է նրանում, որ առհմական որդերն իրենց բնական բջիջներով մեկ մեկ կտրատում և մոմով կպցնում են փայտից հատուկ պարասատված կտորների պատրոնների վրա: Այս փայտի

\*) Հայաստանում այս եղանակը մեզ անհայտ պատճառներով կոչվում է Շիշկինի անունով:

Կտորները նախօրոք իրար կողք-կողքի ամրացված են շրջանակների երկարությամբ՝ ձողերի վրա; Պատվառ-տումները տալուց հետո այդ ձողերն իրենց փայտի կտորներով դնում են շրջանակների մեջ և տեղավորում խնամող ընտանիքների բնի մեղքով լցված շրջանակների արաքում. (տես № 5-6-7 նկարները):



Նկ. 5.



Նկ. 6.

- Նկ. 5. Հենարաններով օրգանակ, որի մեջ տեղավորվում են ձո-  
ղերը պատրոններով (Յանդերի եղանակով)  
» 6. Երշանակի մեջ տեղավորված ձողերը պատվաստած  
բգիչներով (Յանդերի եղանակով)



Նկ. 7. Պատրոնների վրա խնամված մայրապտռուկներ  
(Յանդերի եղանակով)

Որդերի տեղափոխումը բնական քջիջներից արհեստական քջիջների մեջ։ Այս եղանակն ավելի կատարելազորման է քանի որ կարելի է օգտագործել բոլոր թըրթուրները։ այս եղանակը վերամշակված է Դուլետի կողմից (Թասակների առաջարկել), իսկ Պրատդի կողմից առաջարկված է թասակների տեղավորման համար հատուկ պատրոններ, դրա համար էլ այս եղանակը կրում է Պրատդ-Դուլետի անունը։

Որպեսզի այս եղանակով հանենք մայրեր, պետք է կատարել հետեւյալ աշխատանքները։

1. պատրաստել թասակներ։


2. թասակների պատրաստումը որդերի տեղափոխման համար։

3. թասակների կերի մատակարարումը։

4. Պատվաստել թրթուրը (որդը)։

Անհրաժեշտ է խնճորի կամ տանձի փայտից պատրաստել հատուկ կաղապար՝ թասակներ պատրաստելու համար։ Կաղապարի երկարությունը պետք է լինի 10 սմ։ իսկ հաստությունը 10 մմ։ Փոքրիկ ամանի մեջ հալում ենք մաքուր մոմը, ամանի տակը լցնում ենք ջուր, մոմի շերտը ամանի մեջ ջրի վրա պետք է լինի 3—4 սմ։ Աշխատանքի ժամանակ մոմի ամանը պետք է միշտ տաք պահպի կրակի վրա, չթողնելով, որ եռա-

Կաղապարների քանակը պետք է լինի 4—5 հատ, որը  
պետք է դրվի ուրիշ սառը ջրով ամանի մեջ. հարկ չկա  
ամբողջ կաղապարը թրծելու, բայց ական է, որ կաղա-  
պարները թրծմեն 2 սմ. բարձրությամբ:



Նկ. 8. Շրջառակ, որի մեջ տեղափարվում են վանդակներով չբեզմնավորված մայրեւ.

Թասակները պատրաստվում են այսպես. կաղապա-  
րի ծայրը թրծում ենք, հետո թափ տալիս, որպեսզի  
վրայի ջրի կաթիլները թափվեն, հետո կաղապարի թաց  
ծայրը 5—6 անգամ թաթախում մոմի մեջ, մինչև 5—7  
մմ. խորությամբ, որից հետո թողնում ենք մոմը՝ կա-  
ղապարի վրա սառչի, ապա վրայից հանում. այս մոմից  
պատրաստված թասակները ամրացնում ենք պատրոննե-  
րի մեջ:

Երբ թասակները կպցնում ենք պատրոնների վրա,  
իսկ պատրոնները կպցնում հատուկ շրջանակների մեջ,  
դրանցից հետո պետք է անցնել թրթուրների պատվաստ-  
մանը, այսինքն որդերը տեղափոխել բնական բջիջներից  
արհեստական թասակների մեջ:

Թրթուրները պետք է գնել ուղիղ թասակների հիմ-  
քում, որտեղ դրված է մեղք կամ կաթնահյութ: Մեղքը  
կամ կաթնահյութը մեկ թասակի համար բավական է  
մի փոքր կաթիլ կորեկի կամ ոսպի հատիկի չափ: Կաթ-  
նահյութը տրվում է թասակի հատակին կաթիլի ձևով

և ոչ թե ուժով քսում պատերին, որպեսզի կաթնահյութը չպի չպնդի և չըռբանա, գրա համար էլ խորհուրդ է տըրպում հյութը լցնել ոչ թե բոլոր թասակների մեջ միանդամից, այլ աստիճանաբար:

Թրթուրների տեղափոխումը թասակների մեջ կապարվում է հատուկ զգալիկի միջոցով, որը պատրաստվում է փայտից կամ սագի փետուրից և կամ ալյումինի լարից. մի ծայրը շատ թեքված պետք է լինի, որպեսզի հեշտացնի բնական թղթիներից թրթուրների հանելը: Գողալիկը պետք է պատրաստել նուրբ, բարակ, որի լայնությունը պետք է լինի մոտ  $\frac{1}{2}$  մմ:

Չեչի թղթիներից, որտեղ գտնվում են հարմար փոքրահասակ թրթուրներ, կտրում ենք խորությամբ տաքդանակով, բջջի բարձրության կեսը կամ  $\frac{1}{3}$  մասը. այսպիսի թղթիներից թրթուրները շատ հեշտությամբ կարելի է տեղափոխել:

Չեչը, որտեղից պետք է վերցնել թրթուրները, պետք է դնել լույսին մոտիկ, որպեսզի լուսավորվի բջջի հատակը, որտեղ ընկած է թրթուրը: Թրթուրի տեղափոխման ժամանակ զգալիկը իջեցնում ենք թրթուրի տակից, մեջքի կողմից: Պետք է աշխատել գողալիկն ավելի մոռեցնել բջջի հատակին, որպեսզի չվնասվի թրթուրը. Հենց որ թրթուրի մեջ մասը լինում է զգալիկի մեջ դգուշությամբ զգալիկը հանում ենք բջջից և շատ զգուշությամբ դնում ենք թասակների մեջ, իջեցնելով զգալիկը թասակի հատակին, հետո թեքում ենք զգալիկը մի կողմի վրա, որպեսզի թրթուրը նրանցից ընկնի թասակում գտնվող կաթնահյութի մեջ:

Եթե մի անդամ փորձում ենք թրթուրը բջջից հանել և չի հաջողվում, երկրորդ անդամ չպետք է փորձել նույն թրթուրը վերցնել, այլ պետք է վերցնել ուրիշը:

Մայրացուները տալուց հետո երկրորդ օրը պետք է ստուգել, տեսնել, թե ընտանիքը մայրապակներ կառուցում է թե ոչ, եթե կառուցում է, պիտի շուտ փակել, իսկ եթե չի կառուցում, նորից պիտի ստուգել

ընտանիքի բունը և գտնել բնում եղած մայրապտուկները, որոնք առաջին ստուգման ժամանակ հավանորեն վրիսել են աչքից: Եղած մայրապտուկները ոչնչացնելուց հետո, պետք է տալ նոր մայրացուների պատվաստում և հինը վերցնել, որովհետու հրսը արդեն անպետք պիտի համարել:

Այն անտեսությունները, որոնք զբաղվում են մայրահանձան աշխատանքներով, անհրաժեշտ է նրանց ունենալ նույլեռուսներ, որոնք ունեն 100—300 գրամ մեղու:

Նույլեռուսները կազմակերպելու համար պետք է վերցնել մի նորմալ գատարի փեթակ և բաժանել 3—4 զուգահեռ մասի, իսկ փեթակի ցածի մասից բաց անել արկանոցները տարբեր կողմերից և տալ նրանց համապատասիան քանակությամբ մեղուներ իրենց պաշտով, ինչպես և մայր: Այս ձևի նույլեռուսների առողջեռությունը կայանում է նրանում, որ բերքի նախօրյակին փարելի է նրանց միջնապատերը վերցնել, մեկից այլելի մայրեր հանել և օգտագործել բերքը, որպես նորմալ ընտանիքի:

Նույլեռուսները կազմակերպելուց հետո ստուգել, երբ արդեն մայրը մայրապտուկներից դուրս է եկել և ունի արտաքինով նորմալ կառուցվածք, սպասել 5—10 օր և հետո նորից ստուգել, եթե մայրը բեղմնավորվել է և սկսել է ձվեր դնել, սպասել նորից 2—3 օր, որպեսզի մայրը առաստ կերպով սկսի ձվել ընտանիքում, որից հետո միայն բեղմնավորված մայրը վերցնել տալ կարիք ունեցող նորմալ ընտանիքներին, իսկ նույլեռուսներին 1—2 օր հետո տալ նորից մայրապտուկ կամ անմիջապես չըրկմնավորված մայր:

Իտկ եթե առաջին կտմ երկըրդ ստուգման ժամանակին պիտի ոչնչացնել և տեղը տալ ուրիշ մայրապտուկներ:


Եթե մայրապտուկներ ունենք, բայց ազատ նույլեռակ պարզվի, որ մայրը ունի պականություններ, այդուսներ և որը ընտանիքներ չունենք, այդ գեղազում հար-


կավոր է մայրապտուկները առանձին-առանձին վերցնել վանդակների մեջ և բոլորը միասին դնել մի ուժեղ և որբացրած ընտանիքում, մինչև մայրապտուկներից մայրերի գուրս գալը: Այդ արվում է հատկապես մայրապտուկները նորմայ ջերմաստիճանում պահպանելու համար: (Տես № 8 նկարը):

Այս գեղքում, երբ մայրապտուկներից մայրերն արդեն գուրս են եկել, պետք է վերցնել մայրերին վանդակների մեջ և տալ կեր և բաժին շաքարի պուղ-րալի և մեկ արժին մեղրի խառնուրդից: Եթե մայրերը վանդակում մնալու են 3-ից այլելի օր, այդ գեղքում վանդակում դնել 5-10 ջահել մեղուներ, մորը խնամելու համար:

Բեղմնավորված և չքեղմնավորված մայրերը ընտանիքներին տալու ժամանակ պետք է կիրառել Հետելյան եղանակը՝ մայրը տեղափոքել մայրավանդակում, որի մի կողմում եղած փայտյա կափարիչի ներսի կողմից դնել կեր, իսկ մեկ օրից հետո վանդակի ցածի կողմից բեղմնավորված մայր տալու դեպքում կազմնել մոմաթերթի երիու հաստության մոմի շերտ և դնել մոր կարեր ունեցող ընտանիքի բնի շրջանակների արանքում, այնպես որ մոմաթերթով ծածկված կողմը ուղղված լինի ռեալի ներքեվ:

Խոհ չքեղմնավորված մայրեր տալու դեպքում ան-հրաժեշտություն է զղացիում Երկու օր մայրը դնել վանդակում՝ երկու կողմից էլ փակած և կերպվ ապա-հովված: Երկու օր հետո միայն ցածի կողմի կափարիչը հանել և տեղը կացնել բարակ մոմաթերթի շերտ և նույն մերուհիցյալ ձեռվլ դնել ընտանիքի կամ նույնեւու-սի մեջ:





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |    |
|---|----|
| Արհեստական մայրահանման նշանակությունը և սելեկցիոն<br>աշխատանքները | 3  |
| Մայր մեղոնների արհեստական սերմնավորումը                           | 22 |
| Արհեստական սերմնավորման փորձերը Հայաստանում                       | 23 |
| Արհեստական մայրահանման եղանակները                                 | 28 |
| Մեղոնների բնական մայրահանումը                                     | 29 |
| Մայրահանման Պեխազեկի եղանակը                                      | 33 |
| Մայրահանման Ցանդերի եղանակը                                       | 35 |

Պատ. խմբագիր՝  
ԴՐ. ԲԱՐԴԻԱՆՈՅՑԱՆ  
Տեխ. խմբագիր՝  
Ի. ՎԱՐԴԱԿԵՅԱՆ

Վ.Ֆ. 02272. Պատվեր 32. Տիրաժ 1500. տպագր. 2,5 մամուլ.  
Հեղ 1,8 մամ. Ստորագրված է տպագրության /Ա-47 թ.

Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կեց պոլիգր. և հրատ. վարչ. № 1  
տպարան, Երևան, 1947

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0007932

ԳՐԱԴԱՐԱՆ 1 Ռ. 50 4.

22

A 11  
19293

25029